

## Հեքիաթ շարք

### Կապույտ ճնճղուկների արահետը

Ի՞նչն էր ինձ խանգարում գնալ Կապույտ ճնճղուկների արահետ: Ես գիտեի դրա տեղն ու քանիցս եղել էի այնտեղ:

Դա մի տեղ էր, որտեղ իմ լրջությունն ինձնից օտարվելով՝ վերածվում էր պատումի:

Մի տեղ, որտեղ ծղոտից խրճիթ կար ու շաքարից լուսամուտ:

Տեղ, որտեղ անտառը վազում էր, օդը՝ համեղ էր, քարը՝ փափուկ:

Այնտեղ ժայռից կաթ ու մեղր չի բխում, որովհետև ես կաթ չեմ սիրում: Փոխարենը շոկոլադի գետեր կան, որոնք հոսում են խրճիթիդ կողքով:

\*\*\*

Ես քանիցս եղել եմ Կապույտ ճնճղուկների արահետում ու գիտեմ դրա տեղը: Դա մի տեղ է, որտեղ իմ լրջությունն ինձնից օտարվելով վերածվում է Արահետի:

Տեղ, որտեղ կարող է հայտնվել յուրաքանչյուրը, եթե հրաժարվի սահմանումից, որ ժամանակը գծային է, իսկ սեփական անձի ընկալումն էլ այլոց աչքերում՝ մտացածին:

Կապույտ ճնճղուկների արահետում խրճիթը կարող է դառնալ պալատ ու դու՝ արքայադուստր: Քեզ կշրջապատեն փոքր ժամանակ կարդացած հեքիաթի հերոսներն, իսկ դու՝ նուրբ ժանյակներով եզերված կերպասե փքուն զգեստի մեջ կսավառնես օդերում ու կհասնես ամպերին:

-Ո՞ւր ես տանում ինձ, ամպի՛կ,- հնարավոր է հարցնես դու:

-Կապույտ թռչունների արահետ,- հաստատ կպատասխանի նա՝ չկասկածելով, որ ինքը հենց Կապույտ թռչունների արահետում է:

\*\*\*

Շատ հեշտ է լինել Կապույտ ճնճղուկների արահետում ու կրծել շաքարի լուսամուտը: Այնտեղ ինձ սպասում են իմ հեքիաթի հերոսները: Այն հեքիաթների, որոնք կարդացել եմ փոքր ժամանակ, բայց հիմա ոչինչ էլ չեմ հիշում: Դրանք բոլորը ես կորցրի, երբ

պատահմամբ դուրս թռա Կապույտ ճնճղուկների արահետից:

Պատահարը պատահական չէր բնավ: Այն նույնիսկ չափազանց էլ օրինաչափ էր:

Բոլորն էլ առնվազն մի անգամ եղել են Կապույտ ճնճղուկների արահետում, սակայն կորցրել են դրա մասին հիշողությունն ու դրա մասին խոսում են որպես հեքիաթի: Այդ մասին գրված բազմաթիվ հորինվածքներ կան, որոնք որակված են որպես հեքիաթներ ու հենց եզրաբառն ինքը՝ մարդու գիտակցությանը հասցնում է երևույթի չգոյության մասին վիճահարույց տեղեկույթ:

Ո՞վ կարող է ասել, թե ինչ է հեքիաթը:

«Հեքիաթը հորինվածք է, որն իրականության հետ ոչ մի կապ չունի,- ասել են ինձ փոքր ժամանակ,- դա պատմություն է այն մասին, որն իրականում գոյություն չունի»:

Երբեք էլ չեմ հավատացել հեքիաթի ընկալման տարածված սահմանմանն ու հենց այդ սահմանումը որակել եմ որպես հեքիաթ:

Հեքիաթն ու իրականության սահմանված ընկալումը միևնույն աստառի տարբեր երեսներ են: Քանզի աշխարհը մարդուն անմիջական չի տրվում: Աշխարհի ու մարդու միջև ընկած է մեկնաբանությունը: Իրականությունը, այո՛, աշխարհի մի մեկնաբանություն է: Այդպիսի մի մեկնաբանություն է նաև հեքիաթը:

\*\*\*

Հնարավոր է, որ այս պահին ինչ-որ մի տեղ մարդ է մեռնում: Հնարավոր է, որ նա մեռավ արդեն, երբ գրեցի նրա հնարավոր մահվան մասին կասկածներս: Մահվան թափորը նրան կուղեկցի դեպի գերեզման: Մարդիկ կնայեն դագաղի մեջ պառկած չմարդուն ու մտքի մեջ կժպտան: «Խաղից դուրս թռավ», - կմտածի դագաղի հետևից գնացող մի մարդ՝ բնավ չմտախոզվելով, որ շատ շուտով, ավելի շուտով, քան կարծում էր, ինքը ևս կպառկի նույնանման մեկ այլ դագաղի մեջ:

Հնարավոր է, որ այս պահին ինչ-որ մի տեղ մարդ է ծնվում: Նույնքան հնարավոր է, որ նա ծնվեց արդեն, երբ գրեցի նրա հնարավոր ծնունդի մասին կասկածներս: Մայրը սիրագործով կնայի մանկիկին ու կզգվի նորածնի փոքրիկ թաթիկները: Մարդկային նույնպիսի մի բազմություն նրանց կուղեկցի տուն: «Ես էլ եմ ուզում երեխա ունենալ», - կմտմտա բազմության աղջիկ-կանանցից մեկը:

Միևնույն ժամանակ մեր հարևաններից ինչ-որ մեկը հնարավոր է մյուսի հետ նստած սուրճ է խմում ու քննարկում այդ երկու դեպքերի համադրությունը: Հնարավոր է, որ նրանք այդ մասին չեն էլ քննարկում, ինչպես նաև այն, որ նրանք դեռևս սուրճ չեն խմում կամ նրանք, պարզապես, իրենց տանն են:

\*\*\*

Ժամանակի ընկալման սեփական մեկնաբանությունը մի մարդու մոտ առաջացրել էր գծայնության զգացողություն և համաձայն այդ մեկնաբանության՝ մարդ մի օր ծնվում և մի օր էլ մեռնում է: Դրանց արանքում ինչ ասես կարող է լինել:

Մեկ ուրիշ մարդ երկար մտածելուց հետո որոշեց, որ ժամանակն այնքան էլ գծային չէ, քանի որ գծայնության մոդելը չէր տալիս բացատրությունն այն պատահարի, թե ինչպես մարդը կարող է հայտնվել Կապույտ ճնճղուկների արահետում:

«Ժամանակը դիսկրետ է», - մտածեց նա ու մեռավ: Մինչ այդ արդեն մեռել էր ժամանակին գծային որակներ տվող մարդը:

\*\*\*

Մեր հարևանի աղջիկը չի սիրում ամուսնու հետ քնել: Ինքը սիրում է ուրիշ երիտասարդի: Այդ երիտասարդը սիրում է նրա ընկերուհուն, ընկերուհին՝ ինձ:

Այդ պահին տեսա օրգազմից աղճատված դեմքը, երբ նա տքնում էր վրաս: Ես կիսաանտարբեր պառկած էի:

Իմ միտքը թևածում էր Կապույտ ճնճղուկների արահետում: Ես գիտեի դրա տեղն ու քանիցս եղել էի այնտեղ:

## Սև դագաղի մեջ պառկած կինը

Նրան լավ չեմ հիշում: Նկատի ունեմ՝ կոնկրետ այդ կնոջը: Այն ժամանակ յոթ տարեկան էի: Աղոտ հիշում եմ, որ դասից գալուց տեղյակ էի մեր մուտքում դրված մի շատ վատ բանի գոյության մասին:

Չէի սխալվել:

Ոտքերիս ծայրով մոտեցա մուտքին ու աչքիս ձգված ծայրը նկատեց սև գույնի վելվետե երկար մի առարկա, որի առկայությունից էությունս ապրեց սարսափի՝ մինչ այդ ինձ անհայտ նոտաներ: Վախից հետ փախա: Սարսուռը, որ մագլցել էր ողնաշարովս մեկ ու պատել սիրտս, տրամաբանական բացատրություն չունեի:

Փախա ու մյուս մուտքի մեր պատկից հարևանի տան պատշգամբից մուտք գործեցի տուն: Էն ժամանակ կյանքն ուրիշ էր ու պատշգամբները բաց էին երկու պատկից հարևանների համար: Էդ հետո բոլորը կատաղեցին ու դուռ-լուսամուտ դրեցին իրար վրա:

Գարուն էր: Արևը պայծառ էր, ինչպես երբեք: Հիշում եմ անգամ հագիս կոշիկը:

Մեր երրորդ հարկի հարևանը քաղցկեղից մեռել էր: Մինչև հիմա չգիտեմ, թե ինչի քաղցկեղ էր:

«Մեր հարևանն էլ էր գլխի ռակ: Տարան Ֆրանսիա՝ բժիշկը գլխի կափարիչը բացել, մորն՝ իրա ճտերով-բանով հանել ու կափարիչը տեղն էր դրել», - կնոջ մեռնելուց երկու օր հետո՝ թաղման ժամանակ ասաց մեր շենքի ընկերուհիներիցս մեկը, ով ինձնից մեծ էր երկու տարով: Տեղում պատկերացրի մարդու գլխի մեջ բուն դրած խեցգետինն իր երկու աքցաններով:

Ես յոթ տարեկան էի: Այն ժամանակ դեռ ոչ ոք ինձ չէր ասել, որ մարդիկ մեռնում են ու, ընդհանրապես, չգիտեի, թե ինչ է լինում մարդու վերջը: Հիմա ոչ մի կերպ չեմ հիշում, թե ոնց իմացա այդ մասին: Կարծեմ՝ գրքում եմ կարդացել:

Թաղման օրը մամաս ինձ տնից դուրս հանեց: «Թաղման ժամանակ մարդ տունը չի մնա», - ասաց:

Ես յոթ տարեկան էի: Ու նայեցի կնոջը, կնոջը՝ սև դագաղի մեջ:

Արևը պայծառ լացում էր երկնքում՝ ինչպես երբեք:

Կնոջ քթի ծակերը բամբակ էին մտցրել ու մինչև հիմա հիշում եմ տարօրինակորեն ուռած ու դեմքի վրա անբնականորեն փռված քիթը: Դեմքը սարսափելի տեսք ուներ, ու ոչ մի կերպ չէի հասկանում, թե ինչ էր կատարվել այդ կնոջ հետ:

Հայացքս չէի կարողանում կտրել նրա դեմքից, կնոջ դեմքից, որ պառկած էր սև դագաղի մեջ: Հիմիկվա դագաղներն այդպես սարսափելի չեն: Կահույքի մատերիալից, շագանակագույն՝ փայլուն կամ անփայլ, մի խոսքով վրաս չեն ազդում: Բայց էն ժամանակվա դագաղները գուժում էին անբեկանելի վերջի մասին կոնկրետ բոթը:

Ու արևն այդ օրը տարօրինակորեն պայծառ շողում էր, բայց այդ ժամանակ այդ մասին չէի էլ մտածում: Ես անքթիթ նայում էի դագաղի մեջ պառկած կնոջը:

Վերևը լայն, ներքևը նեղ, սևաթույր վելվետից դագաղի մեջ պառկած կնոջը յոթ անգամ պտտեցրին մեր մուտքի դիմաց ու ամեն անգամ պտտեցնելուց այնպես էր ստացվում, որ գլխի մասը բարձրացնելուց դեմքով իմ կողմն էին շրջում, ու ես շարունակում էի անթարթ նայել դագաղի մեջ պառկած կնոջը:

Դագաղի մեջ պառկած կնոջ աղջիկը տարիներ հետո երբ դարձավ իմ մոտ ընկերուհին, չէր հիշելու, որ այդ նույն օրը բարձր ձայնով ուժեղ-ուժեղ լաց լինելուց երբ ուշքը գնաց՝ հագել էր իր ունեցած շորերից իմ ամենասիրածը՝ ալ կարմիր բալագույն թավիշից՝ վրան սև-սև մեծ ծաղիկներով, տակը կտրտված ու անհավասար եզրերով շորը:

Մենք ապրում էինք առաջին հարկում, ու փոքր ժամանակ մեր շենքի կոյուղատար անցքերը հաճախակի լցվում էին: Ունիտազի մեջից ջուրը հելնում ու բաղնիքի տրապից դուրս էր տալիս:

Ես միշտ էմոցիոնալ եմ եղել, այն ժամանակ՝ ավելի շատ: Ու կոյուղատար խողովակների խցանումը վրաս ազդել էր: Դրան ասում էի «կանալիզացիան հետ ա տալիս» ու գիշերները գեշ-գեշ երազներ էի տեսնում, թե կոյուղին հետ է տվել, մեր ամբողջ տունը քաթի մեջ՝ կորել ու կեղտաջուրն էլ հասել է առաստաղին:

Հերթական անգամ տան եղած քուրջ ու փալասները խցկել էինք բոլոր հնարավոր անցքերը, որտեղից ջուրը կարող էր ետ տալ ու վերևի հարևաններին զգուշացրել, որ զուգարան չգնան: Հայրս ասաց, որ մեռնող կինը գոռացել էր, թե ինչու՞ մեր պատճառով պիտի զուգարան չգնա: Ու հորս ասելով՝ կինը աղջկան բաղնիքի տրապի վրա դիտմամբ չիշիկացնում էր: Հիմա, իհարկե, տրամաբանորեն չեմ կարողանում հասկանալ, թե ինչու բաղնիքի, բայց հիշողությունները տրամաբանության չեն ենթարկվում:

Ու մուտքի առաջ կանգնած՝ պատկերացնում էի դագաղի մեջ պառկած կնոջը՝ տրապի առաջ կռացած, աղջկա երկար ու սև մազերը մի ձեռքով հավաքած ու մյուսով՝ երեխայի տոտիկներից բռնած չիշիկացնելուց:

Արևը, ետ տված կոյուղին, երկար, սև ու սոթիկ մազերով երեխային չիշիկացնելու հիշողությունները հատվել էին ժամանակի այդ պահին՝ կոնկրետ մեր մուտքի դիմաց մի սև դագաղաչափ հատվածում, ու ես սարսափելի վախեցել էի:

Թաղումից հետո սկսվեցին մղձավանջները: Հետոն էական չի: Արևը էլի շարունակում է շողալ պայծառ: Բայց ոչ այնպես, ինչպես այդ օրը: Մեր կոյուղիները այլևս չեն խցանվում շատ շուտվանից, ու, ընդհանրապես, այդ տանը ես վաղուց չեմ ապրում:

Դեպքից առնվազն երկու տասնյակ տարի հետո, ամառային մի շատ սովորական օր՝ նստած եմ ժամանակի ու տարածության հատման ինչ-որ մի կետում, իսկ դեմ դիմացս տնկված մի պատկառելի տիկին տենդագին ապացուցում է իրավացիությունն ինչ-որ հարցում ու ընչապաշտ հայացքով նայում օպոնենտին: Այդ կնոջ համար մահը չորրորդ կարգի հարց է. նա երբեք էլ չի մտածում, որ մի օր մեռնելու է: Ու ինքը մի օր կգբաղվի այդ հարցով: Նկատի ունեմ մահով:

Բայց նա պառկելու է դագաղի մեջ: Կարևոր չի, որ այդ դագաղը մեր հարևանի կնոջ դագաղի պես սարսափելի ու վանող չի լինի: Նրա դագաղը հաստատ թանկարժեք կլինի՝ կաղնե փայտից ու ներսը փայլուն աստառով, միգուցե նաև՝ հովացնող համակարգով:

Պատկերացրեցի տիկնոջը դագաղի մեջ:

Հետո պատկերացրեցի ինձ՝ դագաղի մեջ պառկած:

**Զբաղված, կարևոր ու խելացի Մարդը**

Նա գիտեր Կապույտ ճնճղուկների արահետի տեղն այնպես, ինչպես մեզանից յուրաքանչյուրը: Ինչպես բոլորս՝ նա մտածում էր, որ մի օր կգնա այնտեղ, երբ բոլոր գործերն ավարտի:

Մարդը գտնվում էր ճանապարհի կեսին: Ու, թեպետ՝ ենթադրաբար, ոչ ոք չգիտեր, թե նա ոնց էր մտածում, սակայն հավանականությունների տեսությունների համաձայն՝ հենց այդպես էլ մտածում էր:

Նման մարդիկ, սովորաբար նիհար ու բարձրահասակ են լինում՝ անհետաքրքիր դիմագծերով ու անհասկանալի արժեհամակարգով: Նման մարդկանց մտահայելուց, սովորաբար, որևէ հետաքրքիր կերպար կամ միտք չեն կարողանում երկնել:

Նրան առաջին հայացքից բարեստես չէիր անվանի: Ավելին: Առաջին հայացքից պարզ էր դառնում ճշմարտությունը, որ Մարդը չափազանց անհետաքրքիր ու ամենակարևորը՝ անհրապույր անձ է: Բայց դա միայն առաջին հայացքից:

Մարդը մտածում էր բոլորի ու ամենքի մասին: Աշխարհն առանց նրա կդադարեցներ իր պտույտը, և այդ պարզ ճշմարտությունը չափազանց լավ հայտնի էր Մարդուն: Ամեն առավոտ նա բարի լույս էր ասում՝ աշխարհի զարգացման ընթացքում հսկայական ներդրում ունենալու գիտակցությամբ:

Մարդը չափազանց զբաղված էր: Նրա ձեռքին էին նայում իր ընտանիքի անդամները, ընկերներն ու բարեկամները, մի խումբ այլ մարդիկ, ու, ընդհանրապես, աշխարհը:

Նա մարդ էր, որ շատ բան էր տեսել ու շատ բան՝ լսել: Մարդու կյանքը չափազանց հստակ կազմակերպված էր ու ամեն բան, նույնիսկ մարդիկ՝ նրա կյանքում ունեին իրենց տեղն ու զբաղեցնում էին իր իսկ կողմից հատկացված դերը: Երբ այդ մարդկանցից մեկը փորձում էր անցնել իր համար նախագծված սահմանը, զբաղված Մարդը նրան դնում էր իր տեղը:

Զբաղված Մարդը դա հենց այնպես չէր անում: Նրա զբաղվածությունը համամարդկային միտում ուներ, ու, նա ապրում էր հանուն բոլորի բարօրության: Նա գոռոզ չէր բնավ, այլ՝ պարզապես զբաղված:

Մարդն, ամենայն հավանականությամբ, գիտակցում էր զբաղվածության ունայնությունը, սակայն ամենօրյա գործերը հոգին լցնում էին հսկա ուրախությամբ ու իրապես պատճառաբանում նրա գոյության իմաստը: Բացի այդ՝ ինքը կարևոր մարդ էր: Այդ մասին նրան ասել էին, երբ դեռ փոքր էր տակավին, ու ինքը դրան հավատացել էր: Այդ հավատն, իրականում, չափազանց հստակ հիմք ուներ. ինչքան ապրում էր՝ տեսնում էր ինքզինքի կարևորության հաստատումն այլոց աչքերում:

Փաստորեն, զբաղված լինելուց զատ, այդ Մարդը նաև չափազանց կարևոր մարդ էր:

Կարևոր Մարդը կանոններ սահմանելու կողմնակից էր, թեպետ նրա թաք ու բիր մտքերից կարելի էր ենթադրել, որ հենց դրա դեմ է: Իհարկե, նա դեմ էր կանոններին ու ենթագիտակցության մեջ ձգտում էր ապրել կանոններին դեմ: Ճիշտ այնպես, ինչպես երագում էր գնալ Կապույտ ճնձղուկների արահետ:

Թե ինչի էր ձգտում Մարդը կամ որ արահետում էին թևածում նրա մտքերը՝ կարելի էր եզրակացնել Մարդու կենսակերպից: Իսկ կենցաղում նա համակ օրենք էր ու օրենքի աննկուն պաշտպանը:

Մարդը կարգապահ էր, մաքրակենցաղ, խոսում էր ցածրաձայն ու մեղմ երանգներով, փայլուն դիվանագետ էր, այսինքն տիրապետում էր մտքերը վարպետորեն թաքցնելու հմտություններին, անգնահատելի աշխատող էր, գիտեր մարդկանց հետ վերաբերվելու ձևերը, հավակնոտ էր ու բոլորի կողմից հարգված...Մի խոսքով, Մարդու կերպարը որպես հասարակության բաղկացուցիչ միավոր՝ կարող էր մարմնավորել նույն հասարակության զարգացման հնարավոր ապագաներից լավագույն տարբերակը:

Կարևոր ու զբաղված Մարդը, սակայն կուլիսներում ասում էր, որ, իրականում, հոգին ձգտում է դեպի Կապույտ ճնձղուկների արահետ: Ավելին: Մարդու աչքերում գրված էր, որ նա ապրում է հենց Կապույտ ճնձղուկների արահետում ու գիտի զբաղված-կարևոր լինելու կենցաղով ապրելու կենսակերպը Կապույտ ճնձղուկների արահետում կազմակերպելու գաղտնիքները:

Ես դրան չէի հավատում, որովհետև համայն մարդկությունը ծնված օրվանից օտարված էր Կապույտ ճնձղուկների արահետից, թեպետ ժամանակ առ ժամանակ նրան հնարավորություն էր տրվում այցելել այնտեղ: Ամենայն հավանականությամբ այն բանի համար, որպեսզի մարդու գիտակցության մեջ պահպանվի Արահետի գոյության մասին հեքիաթը:

Զբաղված ու կարևոր Մարդը նայեց ուղիղ աչքերիս մեջ: «Պետք չի նորեն հեծանիվ հայտնագործել,- ասաց նա,- քեզանից առաջ այդ ամենն արել են բոլորից, համենայն դեպս, քեզանից էլ լավ»:

Մարդը շարունակեց պատմել կյանքը, ասելով, որ այնքան մանրակրկտորեն է պլանավորել ու կազմակերպել այն, որ ճանապարհի առաջին կեսը զբաղված ու կարևոր մարդ լինելու համարմամբ ճանապարհորդելու գիտակցության թելադրանքով իրեն մի այդքան էլ հատկացված ժամանակը բաժանել է էտապների ու հստակ գիտի ամեն շրջանի իր անելիքը:

Ես հիացած լսում էի Մարդուն՝ հասկանալով, որ իրենից կարևոր ու խելացի մարդ չկա արար աշխարհում: Այո՛, այո՛, այդ ընթացքում ես հասկացա, որ նա՝ զբաղված ու կարևոր լինելուց զատ, նաև անչափ խելացի է:

Ջբաղված, կարևոր ու խելացի Մարդը մի անգամ, երբ իր ժամանակից մի պուճուր հատկացրել էր ինձ՝ բերանից հանկարծ պլստացրեց, որ գնել է գերեզմանատեղ ու գիտի անգամ, թե ովքեր են գալու իր թաղմանն ու որ խանութից են գնվելու դագաղի վրա դրվող ծաղիկները:

Մարդն անտարբեր ժպտաց: Ավելի ճիշտ, նրան թվաց, թե շատ ջերմ ժպտաց: Մարդու աչքերի մեջ գրված էր, որ ժպիտը թևածում է Կապույտ ճնճուկների արահետում:

\*\*\*

Երբ նա մեռավ, ես գնացի թաղում, թեպետ հստակ գիտեի, որ նախապես կազմված ցուցակներում ներառված չեմ: Ուզում էի տեսնել զբաղված, կարևոր ու խելացի Մարդուն՝ դագաղի մեջ պառկած: Ուզում էի հավաստիանալ, որ զբաղված, կարևոր ու խելացի մարդը նույնպես մեռնում է:

Նա հանգիստ դեմք ուներ: Աչքերը բաց էին: Դեմքի վրա դաջված ժպիտը ենթադրել էր տալիս, որ մահը Մարդուն պատահել էր ճիշտ այն ժամանակ, երբ նա հանկարծակի գիտակցել էր, որ բոլոր կարևոր գործերը երբեք էլ չեն վերջանում, իսկ նոր գործերն ավելի կարևոր են, քան նախկինները:

Ես ուզում էի լաց լինել, սակայն չկարողացա, որովհետև թաղմանը շատ մարդ կար:

Բոլոր այդ մարդիկ եկել էին թաղում, որովհետև այդպես էր Կարգը: Նրանցից ոչ ոք լաց չէր լինում: Տխուր աչքերն ընդամենը դիմակ էին, որի հետևում թաքնված անհիմաստ, անվերջանալի ու տարաբնույթ հոգսերը վստահ քայլերով նրանց տանում էին դեպի գերեզման:

Հաջորդ օրը գնացի Մարդու գերեզմանի վրա լաց լինելու: Այդ ընթացքում բազմիցս մտախայել էի նրա աշխարհն ու պարզել, որ Մարդու՝ անհրապույր ու անհետաքրքիր անձի ընկալումը իմ մեկնաբանությունն էր, որի հետ ինքը ոչ մի կապ չուներ:

Ես բերանքսիվայր պառկեցի նրա գերեզմանի կողքն ու անձայն արտասովեցի: Գերեզմանի վրա նստած Կապույտ մի ճնճուկ կար:

Ես շարունակում էի լաց լինել, երբ Կապույտ ճնճուկը ոստոստալով նստեց ուսիս:

-Ինչո՞ւ ես լաց լինում,- հարցրեց ինձ Կապույտ ճնճուկը:

-Որովհետև տխուր եմ,- պատասխանեցի ես,- սիրելիս մեռավ:

-Մի տխրի՛ր: Ես քեզ կտանեն այնտեղ, որտեղ ապրում եմ,- ասաց Կապույտ ճնճղուկն ու թռավ: